## Արձանագրության 3

**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հ.26 մանկապարտեզի հիմնանորոգման (2-րդ փուլ) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

13.07.2017թ.
ժամը՝ 10:30

| | |
|---|---|
| Մասնակցում էին | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Իգիթյան/ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, |
| Բացակայում էր՝ | Ա. Հարությունյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կիրակոսյան |

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

---

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

### 2. Բաց մրցույթի գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

---

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Սեյամշին» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

### 3. «ԵՔ- ՀԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ- ՀԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սեյամշին» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

## 4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

**- Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հ.26 մանկապարտեզի հիմնանորոգման (2-րդ փուլ) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Սեյսմշին» ՍՊԸ –ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ------------------------ Տ. Իգիթյան

Անդամներ՝

------------------------ Ա. Կիրակոսյան

------------------------ Կ. Հարությունյան

------------------------ Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ------------------------ Ն. Կիրակոսյան